

Հաստատված է՝

«Մալաթիա Ունիվերսալ Վարկային
Կազմակերպություն» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ, 09.09.2011թ.
արձանագրություն N 2
Խորհրդի նախագահ՝
Ա. Երանոսյան _____



Գրանցված է՝

ՀՀ Կենտրոնական բանկում
« 16 » « 11 » 2011թ.
Գրանցման համար 15
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ՝
_____ Ա. Զավադյան



«Մալաթիա Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նոր խմբագրությամբ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Մալաթիա Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է փայտերերի 27.07.2006թ. հիմնադիր ժողովի որոշմամբ և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ: Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանշանով կլոր կնիք, անկյունային դրոշմակնիք և համարային կնիքներ՝ ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների համար:

1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (հետագայում՝ օրենք կամ օրենսդրություն) և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է.

հայերեն լրիվ՝ «Մալաթիա Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
անգլերեն՝ «Malatia Universal Credit Organization» Limited Liability Company
ռուսերեն՝ «Универсальная Кредитная Организация Малатия» Общество с ограниченной ответственностью

Վարկային կազմակերպության անվանման կրճատ տարբերակն է.

Հայերեն՝ «ՄԱԼԱԹԻԱ ՈՒՎԿ» ՍՊԸ

Անգլերեն՝ «MALATIA UCO» LLC

Ռուսերեն՝ «МАЛАТИЯ УКО» ООО

1.9. Ընկերության գտնվելու վայրը և գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Սեբաստիա 66:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակը ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.2. Ընկերությունը համապատասխան լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հետևյալ գործառնությունները.

1) իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,

2) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ, տրամադրել երաշխիքներ,

3) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործառնություններ կատարել,

4) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

5) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,

6) կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

7) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

8) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

9) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

10) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2.4. Ընկերությունը կարող է տրամադրել ձեռնարկատիրական և սպառողական վարկեր կամ փոխառություններ:

2.5. ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործառնություններ:

2.6. Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և օրենքով վարկային կազմակերպություններին չթույլատրվող այլ գործունեություն:

2.7. Ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով փոխառություններ չի ներգրավում:

2.8 Ընկերությունը գնում և վաճառում է արտարժույթ կանխիկ և անկանխիկ ձևով:

2.8. Ընկերությունն ինքն է որոշում իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները:

2.9. Ընկերության և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և համարվում է լիցենզավորված ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից: Ընկերությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Ընկերությունն իրավունք ունի սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս (ՀՀ դրամով, արտարժույթով):

3.2. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ օտարերկրյա պետություններում: Մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները իրավաբանական անձինք չեն և գործում են

Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության կողմից տրված լիազորագրի հիման վրա:

3.3. Ընկերությունն ունի օրենքով չարգելված քաղաքացիական այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են նրա գործունեության իրականացման համար, եթե դա չի հակասում Ընկերության կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային և նպատակներին:

3.4. Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ավանդները (ներդրումները), դրանց հաշվին ստեղծված, ինչպես նաև Ընկերության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքն Ընկերությանն է պատկանում սեփականության իրավունքով:

3.5. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.6. Ընկերությունն իրավունք ունի.

1) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

2) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները,

3) օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

4) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.7. Ընկերությունը պարտավոր է.

1) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, կազմել, հրապարակել, ներկայացնել հաշվետվություններ,

2) օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել իր գործունեության վերաբերյալ,

3) ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

4) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերության մասնակիցների ցանկը սահմանվում է սույն կանոնադրությամբ և նշված է սույն կանոնադրության հավելվածում:

Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:

4.2. Ընկերությունը որպես մեկ հիմնադիր (մասնակից) չի կարող հիմնադրել կամ ունենալ այլ տնտեսական ընկերություն, որը բաղկացած է մեկ անձից:

4.3. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն.

1) օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը,

2) տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, Ընկերության տնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ,

3) ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (շահութաբաժնի) մասը,

4) հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում,

5) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով,

6) Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,

7) հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

8) Ընկերության չբաշխված շահույթի հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,

9) օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4.4. Ընկերության մասնակիցը իրավունք ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակցի կամ այլ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունք: Մասնակիցների կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց: Մասնակիցների նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Մասնակիցների նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնեմասերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Ընկերության բոլոր մասնակիցները միաժամանակ:

Ընկերության բաժնեմասերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում Ընկերության զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնեմասերի արժեքը (կամ Ընկերության զուտ ակտիվների մեծությունը) սահմանվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

4.5. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած մասնակիցների համաձայնությամբ:

4.6. Անձը և վերջինիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերել նշանակալից մասնակցություն միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.7. Ընկերության մասնակիցները պարտավոր են.

1) սույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ,

2) չիրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ,

3) կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

4) կրել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4.8. Այն մասնակիցը, որը սույն կանոնադրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում, կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելուն, կարող է հեռացվել Ընկերությունից՝ « օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.9. Ընկերությունն իր կանոնադրական կապիտալում բաժնեմասեր ձեռք բերելու իրավունք ունի միայն օրենքով սահմանված կարգով:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՊԻՏԱԼԸ և ՇԱՀՈՒՅԹԸ

5.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

1) այն գույքի, որը մասնակիցները ներդրել են որպես ավանդ կամ այլ պայմանավորվածությամբ նրան են հանձնել,

2) տնտեսական գործունեության հետևանքով ձեռք բերված գույքի,

3) ստացված եկամուտների,

- 4) գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքի:
- 5.2. Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:
- 5.3. Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են օրենսդրությամբ:
- 5.4. Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվում է բացառապես փողով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:
- 5.5. Ընկերությունում ստեղծվում է դրամով արտահայտված պահուստային ֆոնդ՝ կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որը ձևավորվում է Ընկերության զուտ շահույթի հաշվին, ընդհանուր ժողովի սահմանած չափերով կատարվող մասհանումների միջոցով: Պահուստային ֆոնդը ձևավորվում է Ընկերության գործունեության շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափերի հասնելը:
- 5.6. Ընկերության բաշխման ենթակա շահույթը բաշխվում է Ընկերության մասնակիցների միջև՝ ըստ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

- 6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 170.000.000 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ:
- 6.2. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից:
- 6.3. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.4. Ընկերությունը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխել կանոնադրական կապիտալի մեծությունը:
- 6.5. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո:
- 6.6. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել Ընկերության գույքի (չբաշխված շահույթի) հաշվին, Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին:
- 6.7. Ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունում է Ընկերության ընդհանուր ժողովը սույն Կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով:
- 6.8. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:
- 6.9. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:
- 6.10. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է իրականացվել Ընկերության բոլոր մասնակիցների բաժնեմասերի ավանդական արժեքների նվազեցման և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:
- 6.11. Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել իր կանոնադրական կապիտալը, եթե արդյունքում դրա չափը կպակասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:
- 6.12. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումն Ընկերության բոլոր մասնակիցների միայն բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու ճանապարհով պետք է իրականացվի Ընկերության բոլոր մասնակիցների բաժնեմասերի չափերի պահպանմամբ:

6.13. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.14. Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝

- 1) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ընդհանուր ժողով),
- 2) Ընկերության խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ),
- 3) Ընկերության գործադիր տնօրենը (այսուհետ՝ գործադիր տնօրեն):

7.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է: Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

7.3. Ընկերության բոլոր մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվելու ընդհանուր ժողովին, մասնակցելու օրակարգի քննարկմանը և քվեարկելու որոշումներ ընդունելիս:

7.4. Ընկերության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր ժողովում ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

7.5. Ընկերության մասնակիցներն իրավասու են մասնակցել ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

7.7. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են.

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերի լուծումը,

2) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

3) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,

4) Ընկերության խորհրդի ձևավորումը, խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

5) Ընկերության գործադիր տնօրենի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

6) Ընկերության վերստուգողի ընտրությունը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

7) տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

8) Ընկերության շահույթն Ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշման ընդունումը,

9) Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը),

10) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը,

11) խորհրդի ներկայացմամբ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

12) Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշման ընդունումը,

13) լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը,

14) շահագրգռվածության առկայությամբ և խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարքներ, որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության զուտ ակտիվների 50/հիսուն/ տոկոսից ավելին),

15) օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.9. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության խորհրդի կամ գործադիր տնօրենի որոշմանը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

7.10. Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովն իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

Սույն կանոնադրության 7.7. կետի 10-րդ, 11-րդ մասերով նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն:

Սույն կանոնադրության 7.7. կետի 2-րդ, 3-րդ մասերով նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդ մեծամասնությամբ: Մյուս հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի մեծամասնությամբ, եթե օրենքով տվյալ հարցի վերաբերյալ որոշում ընդունելու համար ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

Ընկերության գործադիր տնօրենը կազմակերպում է ընդհանուր ժողովի արձանագրության վարումը: Արձանագրությունների գիրքը ցանկացած ժամանակ պետք է տրամադրվի Ընկերության ցանկացած մասնակցի: Նրանց պահանջով արձանագրությունների գրքից տրվում են գործադիր տնօրենի կողմից հաստատված քաղվածքներ:

7.11. Հերթական ընդհանուր ժողովը գումարվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 (երկու) ամիս հետո՝ 4 (չորս) ամսվա ընթացքում: Հերթական ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր տնօրենը: Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից՝ սույն կանոնադրությունում նշված հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև այն բոլոր դեպքերում, եթե դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը: Ընդհանուր ժողովները հրավիրվում և անցկացվում են Օրենքով և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

7.12. Խորհրդի իրավասություններն են.

1) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, նրանց կանոնադրությունների հաստատումը,

2) Ընդհանուր ժողովի հաստատմանը Ընկերության աուդիտն իրականացնող անձի ներկայացումը, նրա վճարման չափի սահմանումը,

3) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,

4) Ընկերության տարեկան բյուջեի և դրա կատարողականի հաստատումը,

5) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ներկայացումը ժողովի հաստատմանը,

6) Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ որոշումների ընդունումը,

7) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր գործառույթների իրականացումը,

8) Ընկերության գործադիր տնօրենի և վերստուգողի վարձատրության պայմանների սահմանումը,

9) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

10) Ընկերության զուտ ակտիվների արժեքի 20-ից (քսանից) 50 (հիսուն) տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարման

հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու վերաբերյալ որոշման ընդունումը,

11) Ընկերության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը,

12) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի հաստատումը,

13) գործադիր տնօրենի առաջարկությամբ Ընկերության գլխավոր հաշվապահի նշանակումը,

14) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

15) Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.13. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը՝ սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Ընկերության խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 3 (երեք) և առավելագույնը 15 (տասնհինգ) անդամից:

7.14. Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

7.15. Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

7.16. Ընկերության խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձ:

7.17. Ընկերության խորհրդի ձևավորման և գործունեության, նիստերի գումարման և անցկացման կարգը, խորհրդի իրավասությունները, նրա անդամների լիազորությունների դադարեցման կարգը, խորհրդի նախագահի իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և Ընկերության խորհրդի կանոնակարգով:

7.18. Ընկերության խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության: Ընկերության խորհրդի նիստերը գումարում է Ընկերության խորհրդի նախագահը:

7.19. Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ եթե կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

7.20. Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր ձայների թվի պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

2) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,

3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը,

4) նախագահում է ընդհանուր ժողովում,

5) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքները,

6) Ընկերության անունից կնքում է աշխատանքային պայմանագրեր՝ Ընկերության գործադիր տնօրենի և ներքին աուդիտորի հետ,

7) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

7.21. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.22. Ընկերության կողմից խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

1) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Ընկերության խորհրդի անդամ (Ընկերության ղեկավար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով),

2) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

7.23. Ընկերության գործադիր տնօրենը.

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Ընկերության գործադիր տնօրենը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից: Գործադիր տնօրենի տեղակալը նշանակվում է խորհրդի կողմից գործադիր տնօրենի ներկայացմամբ: Ընկերության գործադիր տնօրենը հաշվետու է ընդհանուր ժողովին և Ընկերության խորհրդին:

Ընկերության գործադիր տնօրենի իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

7.24. Ընկերության գործադիր տնօրենը իր իրավասության սահմաններում.

1) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձին ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,

2) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.

4) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ընկերության աշխատակիցներին, բացառությամբ տարածքային ստորաբաժանումների ղեկավարների,

5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր այդ թվում՝ աշխատանքային,

6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

7) Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

8) ապահովում է ընդհանուր ժողովի և Ընկերության խորհրդի որոշումների կատարումը,

9) Կատարում է գործադիր տնօրենի տեղակալների միջև պարտականությունների բաշխումը.

10) իրականացնում է օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ՝ ընդհանուր ժողովի, Ընկերության խորհրդի իրավասությանը չվերապահված այլ իրավունքներ,

11) իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի, ընդհանուր ժողովի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ,

12) Գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են Ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի (որոնց) արժեքը կազմում է նման գործարքներ

կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության զուտ ակտիվների մինչև 20 տոկոսը, կատարվում է Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ,

7.25. Ընդհանուր ժողովի կողմից գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

1) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Ընկերության խորհրդի անդամ (Ընկերության ղեկավար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով),

2) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը Ընկերությունում իրականացվում է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն:

8.2. Ընկերությունը Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ հաշվետվություններ:

Ընկերությունը հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն:

8.3. Ընկերության գլխավոր հաշվապահը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, սույն կանոնադրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ընկերության հետ կնքած աշխատանքային պայմանագրով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և այլ հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

8.4. Ընկերության գլխավոր հաշվապահը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

9.1. Ընկերության վերստուգողը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով:

Ընկերության վերստուգող չի կարող լինել Ընկերության խորհրդի անդամը, գործադիր մարմնի անդամը: Ընկերության վերստուգողը միաժամանակ չի կարող լինել Ընկերության այլ աշխատակից:

9.2. Ընկերության վերստուգողը իրավունք ունի ցանկացած ժամանակ անցկացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում և ծանոթանալ Ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր փաստաթղթերին: Ընկերության վերստուգողի պահանջով Ընկերության խորհրդի անդամները, ընկերության գործադիր մարմնի գործառույթները

կատարող անձը, ինչպես նաև Ընկերության աշխատակիցները պարտավոր են տալ անհրաժեշտ բացատրություններ՝ գրավոր կամ բանավոր ձևով:

9.3. Ընկերության վերստուգողը պարտադիր կարգով անց է կացնում ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ մինչև դրանց հաստատումն ընդհանուր ժողովի կողմից: Ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատել Ընկերության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները՝ ընկերության վերստուգողի եզրակացությունների բացակայության դեպքում:

9.4. Ընկերության վերստուգողի աշխատանքի կարգը որոշվում է Ընկերության ներքին փաստաթղթերով:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

9.1. Յուրաքանչյուր տարի Ընկերության գործունեությունը ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից, որին նշանակում է Ընկերությունը՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

9.2. Աուդիտային կազմակերպության ընտրությունը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության: Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Ընկերության խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

9.3. Անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը Ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

9.4. Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակում է անկախ աուդիտային կազմակերպության եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունները:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս կարող է ունենալ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11.2. Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, իսկ արտասահմանում՝ տվյալ պետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

12.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելն իրականացվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի երկու երրորդի մեծամասնությամբ:

12.2. Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ:

13.2. Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

13.4. Ընկերության լուծարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 170.000.000 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության բաժնեմասերը տեղաբաշխված են Ընկերության մասնակիցների միջև հետևյալ կերպ՝

**«Մալաթիա Ռինիվերսալ Վարկային Կազմակերպություն»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
կանոնադրության**

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	ՄԱՍՆԱԿԻՑ	Բաժնեմասի չափը (տոկոս %)
1.	Գագիկ Իգնատոսյան,	82,35 %
2.	Աշոտ Երանոսյան,	11,75 %
3.	Արամ Սարգսյան,	2,95 %
4.	Fontex Solutions Corporation,	2,95 %
	ԸՆԴԱՄԵՆԸ	100%

Հանարակարված, կնքված և կարված է
14 փասեջրա
(-----) թերթ:

Իմ փնտնագրության ու գրանցման ժամնի
պետ՝
Ստորագրություն

վերահսկող
Ստորագրություն

անուն, ազգանուն
ստորագրություն